տանել հասցնել Դավրիժի դուռը, շնչաւոր մի անդամ չիմանայ»։

Սուլթան Մուրատ այս հովիւը հետն առած կը բռնէ Շահ-եօլիի ճանապարհն, ուղղակի Կարին կը մտնէ բոլորովին լեռներու դաղաթից անցնելով և մինչև Պօլիս կը տանէ այս հովիւը, իրեն թադաւոր լինելը նմա կը յայտնէ, պատիւ կանէ, հլուխ (պատուելու համար, ղեստ հագցնել) կը հագցնէ, Միր-չոպան անունով տիտ դոս մի կտայ։

Սուլթան Մուրատ հրաման կարձակէ, մեծ բանակ մի կը կազմուի Կարնոյ մէջ։ Երբ ամեն բան կը պատրաստուի, հետը կը բերէ Միր-չոպանն, որ բանակին և Սուլթանին կառաջնորդէ մինչև Դավրէժ։ Բանակը գիշերն առաջ կը գնար, իսկ ցերեկը Շահ-եօլու վերայ գտնուած բարձր լեռներու դաղաթներու վերայ կը դետեղուէր, մինչև Դավրէժ դրաւեցին։

Սուլթան Մուրատ իւր փափաքին հասած լինելով ուզեց Միր-չոպանը բարձր պատուոյ հասցնել, իւր մեծ փաշաներու կարգը դասել. խոստացաւ նմա մինչև անդամ վաղիրութեան աստիճան.«—ինչ որ թադաւորին տալ կարելի է, պիտի տամ քեզ, ասաց, խնդրէ, ինչ որ կուզես, բարի հովիւ»։

—Չէ, կասէ Միր չոպան, ինձ թադաւոր ևս կարգելու լինիս, հաճելի չէ ինձ, այլ միայն Ապաղայի դաշտն իմ իրաւանց յանձնէ, որ Մէհամդանայ կողմն գտնուած Եզդի ժողովուրդը բերեմ միացնեմ Ապաղայի ժողովրդեան, որոց վերայ հսկեմ որպէս զի թուրք և քուրդ ցեղերու ձեռք նեղութիւն չքաշեն։ Վասն զի որչափ թուրքերու ձեռք, նորա քառապատիկը քրդերից կը-հալածուին, կը նախատուին և ամեն զրկանք կը կրեն։